քան մելամաղձոտ էր, որքան նրա սայլակի տխուր ճռնչոցը: Երկուսն էլ կարծես հառաչանքներ էին արձակում...

Միւս կողմից լսելի էր լինում զբօսնող քաղաքացու ուրախ-անհոգ երգը:

Կէսօրից բաւական անցել էր: Ծովից փչում էր սառն քամի եւ զովացնում էր տօթից տոչորուած բուսականութիւնը: Ծառերի թառամած տերեւները զարթանում էին, խոտերի կորացած ծղօտները վեր էին բարձրացնում իրանց նոաղած գլուխները, ծաղիկները սկսում էին ժպտալ: Շրջակայքը աւելի եւ աւելի կենդանանում էր. զբօսնող բազմութիւնը զարճանում էր ամէն կողմում: Դա օրոայ այն ժամն էր, երբ վանեցիք կողպում են իրանց խանութները, խումբ-խումբ դիմում են դէպի դաշտերը, դէպի այգիները եւ դէպի առոակների եզերքը հովանաւորող ծառերը: Ոմանք միրգ են ուտում: Շատ տեղերում բացօթեայ խարոյկները վառւում են, կրակը շիկանում է, խորոված՝ շամփուրները մխում են, օդը լցւում է ճենճերային անուշահոտութեամբ: Կանաչ խոտերի վրայ փռւում են սպիտակ լաւաշները, եւ այդ պարզ սեղանի շուրջը բոլորում է երիտասարդ խումբը, գինու կամ արաղի բաժակները շրջան են առնում, օդի մեռելային լռութիւնը աղմկում է ուրախաձայն աղաղակներով: Ինձանից փոքր-ինչ հեռու, խոտերի վրայ, նստած էին մի քանի մարդիկ: Տեսնելով, որ ես մենակ եմ նստած եւ օտարական եմ, ինձ կանչեցին իրանց մօտ: Նրանք եկել էին բոստաններում սեխ եւ խարբուզակ ուտելու: Վանեցիք սիրում են ամէն պտուղ իր տեղումն ուտել:

Բոստանների մէջ երեւում էին փոքրիկ աշտարակաձեւ շինուածքներ. դրանք բոստանչիների գիշերային պատսպարաններն էին: Նրանք միշտ գործ ունէին գողերի հետ եւ նրանց պէտք էր մի ամրութիւն: Աշտարակի մօտ մխում էր փոքրիկ վառարանը եւ նրա վրայ դրած էր խեցեղէն սեւ պտոյկը: Նրա մէջ եփւում էր բոստանչու ընթրիքը: Ա՛խ, որքան քաղցր յիշողութիւններ էր զարթեցնում իմ մէջ այդ փոքրիկ վառարանը, այդ խեցեղէն պտոյկը: Շատ անգամ էր պատահել ինձ՝ բարի բոստանչու հետ միասին բաժանել նրա համեստ ընթրիքը. շատ անգամ գնել էի ես նոյն տեսակ խեցեղէն պտոյկ եւ խնդրել էի մօրս, որ պատրաստէ ինձ համար նոյն կերակուրը, բայց երբեք այն համը եւ այն ճաշակը չէր ունեցել:

Բոստանչին, հեռոից նկատելով մեզ, առանց մեր խնդրելու, բերեց մի քանի հատ լաւ սեխեր եւ խարբուզակներ, եւ գլուխ տալով, դրեց մեր առջեւ: Ես տոեցի նրան մի քանի ղուրուշ, որը մեծ դժոարութեամբ ընդունեց: Նրա հեռանալուց յետոյ, իմ մօտ նստողներից մէկն ասաց.